ՄՈԼԴՈՎԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

13.03.2018 18:24

2018 թվականի մարտի 9-ին տեղի է ունեցել «Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների փաստաբանական միությունների և իրավաբանական համայնքների ընթացիկ մարտահրավերները և համագործակցության հնարավորությունները» խորագրով համաժողով: Համաժողովը կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավաբանական համայնքների խորհրդի (CCBE) կողմից՝ Եվրոպայի խորհրդի «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակներում: Միջոցառմանը հարցուպատասխանի ընթացքում ՀՀ փաստաբան Վահե Գրիգորյանը թիրախավորել և քննադատական մեկնաբանություններ է հնչեցրել Փաստաբանների պալատի, Փաստաբանների պալատի խորհրդի վերաբերյալ՝ անսալով եվրոպացի գործընկերների աջակցությունը: Վերջիններիս արձագանքը սակայն տրամագծորեն հակառակ բնույթի է եղել՝ համընկնելով ՀՀ փաստաբանների պալատի աշխատելաոճին և առաջնահերթություններին: Գրիգորյանի խոսքը հիմնականում ներկայացվել է այդ պահին դահլիճում աշխատող լրատվամիջոցների կողմից, իսկ եվրոպացիների պատասխանի ժամանակ լրագրողներն արդեն գնացել էին: Ներկայացնում ենք Մոլդովայի փաստաբանների միության նախագահի արձագանքը Վահե Գրիգորյանի ելույթին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })